

Թէպէտ որ էր անկարգութեամբ եւ հակառակ կաթողիկոս, բայց պարկեշտ էր եւ սրբասէր եւ ունէր բան վարդապետութեան, խրատիչ եւ ուսուցող, որ ամենայն վարդապետք հւ իմաստունք յեպիսկոպոսաց, ի քահանայից եւ ի ժողովրդոցն զնա պատուով ունէին՝ քան զերկոսին, որ անհամք էին որպէս զաղք անպիտանք, որպէս ասաց Տէրն յաւետարանին, որ կոխանք էին եղեալ յամենայն մարդկանէ եւ անպիտանացեալք յոյժ: Այլ սա վասն պարկեշտութեանն փառաւոր էր յաչս ամենեցուն: Եւ զսա տարեալ խոճաներն ամենեցուն միաբանութեամբն ի սուրբ քաղաքն յերուսաղէմ եւ օրհնել ետուն զԳրիգոր եպիսկոպոսն, որ եօթն ութն տարի արեղայ գոյով՝ առաջնորդութիւն առնէր սրբոյն Յակոբայ մեծահոջակ վանացն Հայոց: Եւ յետ այնորիկ զնաց յետ էջմիածինն եւ անտի ի Վրաց տունն եւ անդ եղեւ վախճաննորա, որ էր թվին ՌԿԹ» (1620):

Եւ զարձեալ (էջ 328). «Եւ ի միւս ամին, որ թվին ՌԿԹին էր, զարձեալ ժողովեցան ամենայն երկրէ տօրվաթաւորքն եւ Ջուղայեցիքն եւ առին զԱւետիս կաթողիկոսն ընդ իւրեանս բազում վարդապետօք, եւ զնացին յերուսաղէմ եւ օրհնեցին (զԳրիգոր Պարոնտէրն) եպիսկոպոս»:

Կ'ըսուի նաեւ «Պատմութիւն եւ Վարք Պարոնտէրի» գրութեան մէջ⁷. «Եւ յորժամ

⁷ Ձեռ. Ս. Յակոբեանց Մատենադարանի Թ. 322, էջ 71—72. հմտ. Գալէմբարեան՝ Կենսագրութիւն»